

Ա. Դավթյան

ՄԱՏՂԱՅ ԱՆԱՍՈՒՆԵՐԻ ՎԱՐԱԿԻՉ  
ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ  
8ԵՎ.  
ՆՐԱՆՑ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԵԼՈՒ  
ՄԻԶՈՑՆԵՐԸ

619

2-15\*

ԳՅՈՒՂՂՐԱՑ

1934

ՅԵՐԵՎԱՆ

30 JUL 2010

3639

619

2-15

մր.

ԳՐ. ՀԱՅԱՍՏԱՆ

ՄԱՏՂԱՇ ԱՆԱՍԻՒՆԵՐԻ ՎԱՐԱԿԻՉ  
ԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ  
1006 29540

ՆՐԱՆՑ ԴԵՄ ՊԱՅԹՔԱՐԵԼՈՒ  
ՄԻՋՈՑՆԵՐԸ



ՏԱՐԱՎԱՐԱ

1934

ՑԱՐՑԱՐ

ՄԱՏՂԱՇ ԱՆԱՊՈԽՆԵՐԻ ՎԱՐՍԿԻՉ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՅԵՎ ՆՐԱՆՑ ԴԵՄ ՊԵՅՔԱՐԵԼՈՒ ՄԻջնորդերը

Սոցիալիստական անասնապահության զարգացման սպառնացող ամենալուրջ վտանգը հանդիսանում է մատղաշների վարակիչ հիվանդությունը, վորոնամեն տարի մեզանից հազարավոր զոհեր ե խլում:

Հյուծված, աշխատանքի և կաթնարտաղրության համար անպետք դարձած, ծերացած անասունների հին սերունդը՝ յեթե չփոխարինենք առողջ և ավելի արդյունավետ մատղաշների նոր սերնդով, պարզ ե, վոր մեր անասնապահությունը կդնենք լուրջ վտանգի տակ:

Մեր հոտերի կազմակերպումը և համալրումը պետք է կատարվի բնական կլիմայական պայմաններին հարմարված տեղական ընտիր ցեղի, ինչպես նաև տեղական ու ազնվացեղ անասունների խառնուրդից ստացվող սերնդի հաշվին, վորովհետև ուրիշ տեղերից ներմուծված անասունները՝ չկարողանալով հարմարվել տվյալ վայրի կլիմայական և աշխարհագրական պայմաններին, յենթարկվում են զանազան հիվանդությունների:

Ուրեմն, մեզ հարկավոր է, ինչ զնով ել լինի, ոգաճպանել մատղաշներին և պաշտպանել նրանց վարակիչ հիվանդություններից՝ անասնապահության զըլիմավոր թշնամիններից, ինչպիսիք են նորածինների սպիտակ փորլուծը, թոքերի վարակիչ բորբոքումը և վարակիչ հոդատապը:

Պատ. Խմբագիր՝ Արա. Աբրահամյան  
Մանե. Խմբագիր՝ Գիվանջյան  
Էկզ. Խմբագիր՝ Կոբագրիչ Խ. Այվազյան  
Հանձնվել ե արտագրության 1934 թ. հունիսի 2-ին  
Ատորագրված և տպագրելու 1934 թ. հունիսի 14-ին  
Դրավիտի լիազոր № 261  
Հրատ. № 108, պատվեր № 396, տիրաժ 2000

## ի՞՞ջ Ե ՎԱՐԱԿԻՉ ՀԻՎՈՆԴՈՒԹՅՈՒՆԻ

Վարակիչ հիվանդությունն այնպիսի մի հիվանդություն ե, վորը հիվանդ անասունից փոխանցվում ե բոլորվին առողջ անասունին: Որինակ, յեթե ծաղկով հիվանդ մի վոչխար պահում ենք առողջ վոչխարների մոտ, մի քանի որ հետո տեսնում ենք, վոր առողջ վոչխարներն ել սկսում են հիվանդանալ ծաղկով: Իսկ յերբ թունավոր կամ փտած խոտ ուտելու հետեւ վանքով հիվանդացած մի վոչխար թողնում ենք առողջ վոչխարների մոտ, վորոնք չեն կերի այդ թունավոր կամ փտած խոտը, նրանք յերբեք ել չեն հիվանդանում: Սրանից պարզվում ե, վոր ծաղկով հիվանդ վոչխարի մարմնի միջ կա այնպիսի մի նյութ, վորը՝ յեթե շփման կամ ողի միջոցով անցնում ե առողջ վոչխարին, նա ևս հիվանդանում ե նույն հիվանդությամբ: Հիվանդություն առաջացնող այս նյութը մենք անվանում ենք վարակ, իսկ հիվանդությունը՝ վարակիչ հիվանդություն:

## ի՞՞ջ Ե ՎԱՐԱԿԻ

Վարակիչ հիվանդությունն առաջացնում են սովորական, չզինված աչքին անտեսանելի փոքր եյակները, վորոնք ապրում են հիվանդ կենդանու մարմնի մեջ և այնտեղ բազմանում: Յեթե վարակված, հիվանդ անասունի արյունից մի կաթիլ քսենք ապակու վրա և 800-ից 1000 անգամ խոշորացնող, մանրադիտակ կոչված գործիքով քննենք, այնտեղ կտևնենք գնդասեղի գլխի մեծությամբ կլոր, ձվաձև կամ քիչ յերկար մարմին (միկրոբներ): Այս փոքր, կենդանի եյակները կոչվում են մանրեներ (միկրոբներ):

Կան նուև այնպիսի վարակիչ հիվանդություններ, վորոնք մանրեներն անհնար և տեսնել, թեկուզ 2000 անդամ խոշորացնող մանրադիտակի տակ՝ շնորհիվ նրանց չափազանց փոքր լինելուն: Որինակ՝ դարադ հիվանդության վարակի:

Մանրեները բազմանալու մեջ ընդունակություն ունեն: Յեթե նրանց արվի նպաստավոր պայմաններ, ջերմություն և կեր, նրանք ամեն մի քսան ըորպեսուն կրագմանան: Լույսը մանրեների բազմացման արգելք և հանդիսանում: Մանրեներն ամենից շատ զարգանում են ողափոխությունից դուրկ, մութ, կեղտոտ գոմիրում, վորտեղ նրանք համար գտնում են զարդանալու նպաստավոր ուայմաններ, ինչպիսիք են գոմի ջերմությունը, աղբաջուրը՝ վորպիս կերի միջավայր և մթությունը: Նրանք կարող են զարգանալ և գոմից դուրս, աղբակույցերում և այնտեղ յերկար ժամանակ իրենց գոյրեթյունը պահել: Մանրեները զարդանում են նույնպես ճահճային տեղերում, լճացած և կանգնած ջրերում:

Մանրեների զարգացման արգելք են հանդիսանում ողափոխող, լուսավոր և չոր գոմերը, գոմի բակերի սալահատակումը, ճահճների, լճացած և կանգնած ջրերի չորացումը և գոմերի հաճախակի ախտահանումը:

## ՎՈՐՏԾԵՂ Ե ԳՏՆՎՈՒՄ ՍԿՐԲՆԱԿԱՆ ՎԱՐԱԿԻ

Վարակը գտնվում է հիվանդ անասունի քերնում, ստամոքսում, աղիքներում, արյան մեջ, ներքին գործարաններում և մարմնի բոլոր մասերում: Վարակը կարող և գտնվել հիվանդ անասուններին խնամողների ձեռների, վոտների և շորերի վրա: Վարակը գրա-

Նվուամ ե նույնպես հիվանդ անասունների գոմում, աղբի մեջ և գոմում գործածվող առարկաների վրա:

Թե հորթերի և թե գառների համար ամենավըտանգավոր վարակիչ հիվանդություններն են սպիտակ փորլուծը և թոքերի բորբաքումը: Քուռակների և հորթերի վարակիչ հոդուառուցքը նույնպես պատճառում ե բավական մեծ զնամներ: Մենք կանգ կառնենք միմիայն այս յերեք գլխավոր հիվանդությունների վրա:

Մատղաշների վարակիչ հիվանդությունները շատ հաճախ առաջանում են վատ ինամքի և կերակրման հետևանքով: Մեզ բոլորիս հայտնի յե, վոր թույլ, վատ սնվող անասուններն ավելի շուտ են հիվանդանում, քան ուժեղները: Այն բոլոր պայմանները, վորոնք թուլացնում են անասուններին, նպաստում են վարակիչ հիվանդության առաջացման:

Այս թուլացնող աղդակներից են՝

ա.) մայր անասուններին անբավարար կամ վատրակ կերերով կերակրելը.

բ.) մայր անասունների հիվանդություններից յենթակա գոմերը.

գ.) մութ, ցուրտ, խոնավ և միջանցիկ քամիներից յենթակա գոմերը.

դ.) նորածինների անկանոն և վոչ ռացիոնալ կերակրումը:

Վերոհիշյալ պայմանների առկայությունը նպաստում է վարակիչ հիվանդության տարածման և նրա կործանիչ գործունեյության: Այժմ ծանոթանանք սպիտակ փորլուծի հետ:

## ՀՈՐԹԵՐԻ ՍՊԻՏԱԿ ՓՈՐԼՈՒԾԸ

Հորթերի սպիտակ փորլուծը նորածին հորթերի սուր վարակիչ հիվանդություն ե, վորի ժամանակ առաջանում ե առատ, սպիտակ գույնի վարշահոտ փորլուծ:

Յերբ կաթի կամ ուրիշ նյութերի միջոցով նորածին հորթի մարսղական զործարանների մեջ մուտք են գործում վորոշ վարակիչ մանրեներ, նորածինը հիվանդանում ե սպիտակ փորլուծով: Բացի մարսղական զործարաններց, վարակը կարող ե նորածնի դեռ չչորացած պրոտի միջոցով անցնել նրա այրան մեջ և այս ձևով առաջացնել հիվանդությունը:

Սպիտակ փորլուծով հիվանդ հորթերի կղկղանքի (աղբի) մեջ գտնվող վարակիչ մանրեները՝ խոտի, գոմի պատերի և ուրիշ առարկաների վրա ընկնելով, յերկար ժամանակ կարող են իրենց վարակելու ուժը պահել, այնպես վոր, յերբ նորածին, առողջ հորթն իր ըերանն ե վերցնում ոյլ վարակված խոտից մի շատ, կամ աղբով կեղտոտված պատն ե լիզում, նա կուլ ե տալիս վարակիչ մանրեները և հիվանդանում: Հորթերը կարող են վարակվել և իրենց մորը ծծելիս, յերբ նրա կուրծքը, գոմի կեղտոտ հատակին նստելիս, կեղտոտվում ե աղբով: Նորածինը կարող ե վարակվել հենց ծնած ժամանակ, մոր ծննդական գործարանի արտաքին մասից, յերբ ծնվելիս նրա բերանը շփվում ե

հեշտոցի կեղտուաված մասի հետ և վարակն ընդունում։ Վարակը հորթին կարող է փոխանցվիլ հորթապահի անմաքուր ձեռների միջացով, յիշը նա իր մատները հորթի բերանն է դնում նրան կաթ խմել սովորեցնելու համար։

Նախապես չյեռացրած անմաքուր կաթնամանները կարող են նույնպես վարակի աղբյուր դառնալ։

Նորածին հորթի մարսողական գործարանները ծնվելու առաջին որերը զեռ ամրապնդված չեն, այնպես վոր փոքր անզգուշությունը նրա կերակրման ժամանակ, կարող է առաջացնել ստամոքսի խանդաբում, հասարակ փորլուծ, վորը հետաքայում կարող է վերածվել վարակիչ, սպիտակ փորլուծի և վարակիլ մյուս հորթերին։ Մի շաբաթտկան և նրանցից բարձր հասկի հորթերն սպիտակ փորլուծով չեն հիվանդանում, վորովհետև նրանց ստամոքսը և աղինքներն ամրապնդված են։

### Հիվանդության նօանները.—

Հորթերի մոտ հիվանդությունը հայտնվում է ծնվելուց սովորաբար 1—3 որ, յերբեմն ել ծնվելուց հենց մի քանի ժամ հետո, վորն արտահայտվում է հետեւյալ նշաններով։ Հորթը կամ քիչ ե ծծում կամ բոլորովին դադարում ե ծծելուց, անհանդիսա շարժումներ ե կատարում, բառաչում ե. առաջանում է փորլուծ, վորի ժամանակ նա մեջքը կուացնում է և հետանցքն անընդհատ բաց ե անումենափակում։ Կղկղանքն (աղբը) սկզբում խցուսի նման է և գեղին։ շուտով դառնում է թույլ լորձային և հետո բոլորովին ջրիկ (սպիտակ փորլուծ), վորը լինում է սկզբում թթվահոտ, հետո՝ գարշանոտ։ Հաճախ կղկղանքը փրփրատ է լինում, պարունակում է կաթի փսորներ և յերբեմն ել արյուն, Փորլուծը դնալով ուժեղանում ե և հասնում այն ստիճանի, վոր

կղկղանքն ինքնաբերաբար դուրս է հոսում մշտական բացված հետանցքից։ Հիվանդը սաստիկ թուլանում է, ֆորը յերբեմն ուռչում է, յերբեմն ել ընդհակառակը՝ ներս և քաշված լինում, վորին ձևոց տալիս կենդունին ցավ է զգում։ Մարմնի չերմությունը մի քիչ բարձրացած է լինում, վորը մահից առաջ իջնում է։ Սրաի զարկը և շնչառությունն արագանում են, հիվանդն այլևս տեղից վեր չերածրանում է հիվանդության նշաններն յերեալուց 24 ժամ կամ 2—3 որ հետո անասունը ստակում է զգածկութներով։ Սատկելուց առաջ հորթը զիտակցությունը բոլորովին կորցրած է լինում։ Յեթե բուժման վորոշ միջոցներ ձեռք չեն առնվում, հիվանդների  $80-90^{\circ}$  ստակում են։ Ասողջացաների մոտ նկատվում է յերկարատև փորլուծ, վորը հյուծում է նրանց, Սպիտակ փորլուծի հետևանքով հորթերի մոտ հաճախ տուաջ է գալիս թոքերի և հոդերի բորբոքում։

Սպիտակ փորլուծից ստակած հորթի ներքին գործարանների կրած փոփոխությունները.—

Դիակը սաստիկ մաշված և զունաւ (անարյուն) ե լինում։ Ռեղիկ աղիքը դուրս ընկած, շրտանը լցված է մակարդված կաթով և պանրի շիճուկի նման թթվահամ հեղուկով։ Շրտանի լորձաթաղանթը (ներքին յերենը) ուռած է կարմրած և մասնավորապես ծալքերի վրա նման փոփոխություններ նկատվում են նույնպես բարակ աղիքներում, իսկ հաստ աղիքներում ավելի նվազ չափով։ Բարակ աղիքները մեծ մասամբ փքլած են լինում և պարունակում են գեղնորակ կամ գոր կարմրագոյն, զարշահոտ, փրփրախտոն կղկղանք Աղիքներին կից գտնված խուլերը (ավշային գեղձերը) ուռած է կարմրած են լինում։

Պայմարն սպիտակ փորլուծի դեմ

Պայքարի ամենահիմնական և վստահ միջոցը նորածիններին վարակից պաշտպանելն ե, վորն ավելի հեշտ ե կիրառել և տալիս ե լավ արդյունքներ, քան հիվանդներին բուժելը: Դրա համար ել մենք այստեղ կանգ կառնենք միայն հիվանդությունը կանխող միջոցառումների վրա, անսսանբուժին թողնելով հիվանդների բուժման ձևերի մանրամասնությունները: Սպիտակ փորլուծի դեմ մղված պարագարի հաջողությունը կախված ե մի միայն կովապահի և հորթապահի կողմից դեպի իրենց հանձնարարված աշխատանքներն առնեցած գիտակից և բարեխիդն վերաբերմունքից:

Առողջապահական, կանխարգել հետեւալ միջոցառումներն են, վոր պայմանավորում են ուայքարի հաջողությունը.

1. մայր անասունների ռացիոնալ (բավարար) և երակրումը լավուրակ կերերով.

2. հորթի ծնվելու ժամանակ մաքրության խիստ պահպանում.

3. ծնվելուց հետո հորթի անթերի կերակրումը և պահպանումը համտպատասխան լուսավոր, տաք և չոր հորթան ցում:

## ՄԻԶՈՅԱՌՈՒՄՆԵՐ ԾՆՆԴԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԻՑ ԱՌԱՋ

Ա.) Կովի պոչը մի կողմ ե քաշվում և կապվում (թոկով կապում են մազափունջը ե կողքից տանում, թույլ կերպով ամրացնում վզին):

Բ.) Հետեւ մասները (մասնավորապես յերկու վուների միջանցրը, կուրծքը և պոչը) լվացվում ե գոլջրով և ախտահանվում 30% կրիոլինի լուծույթով:

Գ.) Մասնդական արտաքին գործարանը լվանակ սկզբում մեծ քանակությամբ մաքուր գոլ ջրով, հետո սառը ջրով: Կովի կոկղանքով կեղտոտված մասերը նորից լվանալ և կրիոլինի լուծույթով ախտահանել:

## ՄԻԶՈՅԱՌՈՒՄՆԵՐ ԾՆՆԴԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ ԹԵՎ ԾՆՆԴԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԻՑ ՀԵՏՈ

Ա.) Ծննդական գործարանները լվանալուց և ախտահանելուց հետո, ծնող կովին անմիջապես փոխադրել նրան հատկացված ծնարանը: Ծնարանն ընդհանուր գոյմից դուրս առանձնացրած, մաքուր, լուսավոր, տաք և չոր բնակարան ե, վորտեղ կովը ծնում ե: Առանձին ծնարան չունենալու դեպքում, կարելի ե գոմի մի անկյունը տախտակով կտրել, պատերն սպիտակեցնել, հատակը տախտակամածել, ախտահանել և հատկացնել ծնարանի: Ծնող կովի ատկը պետք ե փոնկ տուատ, մաքուր և չոր ցամքար:

Բ.) Հորթին հարկավոր ե ընդունել մաքուր շորի վրա: Հնդունողը պետք ե հազար լինի արտհագուստ կոշիկները պետք ե ախտահանի: Կովին մոտենալուց առաջ նա պետք ե ոճառով ձեռները լվանա և ախտահանի:

Գ.) Հորթի պորտի արմատը ջրի մեջ յեռացրած կամ կրիոլինի լուծույթով ախտահանված մետաքսի թերով կապվում ե և կապված տեղի քիչ ցածրից կտրվում ե ախտահանված մաքուր միկրատով և կտրվածքն ոծվում ե յոդի լուծույթով կամ փայտի ձյութով: Պորտը կապողի ձեռները մաքուր և ախտահանված պետք ե լինեն: Այս բոլորը կատարվում ե առանց պորտին ձեռք տալու: Ախտահանված ունիթով միայն բռնում են պորտալարի ծայրը, վորն արդեն պիտի կտրվի:

Գ) Հորթի բերանը և քիթը մաքրում են մաքուր սրբիչով և մարմինը չորացնում:

ԵԵ) Հորթին տեղափոխում են մաքուր, չոր, տաք լուսավոր և ողի միջանցիկ հոսանքներից ազատ հորթանոց:

Զ) Հորթի դնչին հագցնում են յերկաթե թելից պատրաստված ցանցից դնչակալ վորպեսդի պատերը չիդի և ցամքարի խոտը բերանը չվերցնի Դնչակալը հանում են կերակրելու ժամանակ, վորից հետո նորից հագցնում են: Մի ամիս հետո դնչակալը հանում են:

Ե) Նորածին հորթը պետք ե ստանա միմիայն իր մոր կաթը, Ծնվելուց հետո, վորքան հնարավոր և շուտ, նրան պետք ե տալ առաջին կաթը, վորպեսզի աղիքների մեջ գտնված չորացած կղկղանքը գուրս մղվի:

Ը) Կուրճքի կաթի առաջին կաթիները կեղտոտված լինելով, հորթին չպետք ե տալ այլ դեն զցել:

Թ) Առաջին որեցը հորթին կերակրում են որական 4 անգում:

Ժ) Կթելուց և հորթերին կերակրելուց առաջ հարկավոր և կովերի կուրճքը մաքուր, գոլ ջրով լվանալ և մաքուր սրբիչով չորացնել:

Սպիտակ փորլուծ յերեան յեկած գոմում ձեռք են առնվում հետեւալ միջոցառումները:

Ա) Հիվանդ հորթերի կղկղանքն անմիջապես ախտահանում են և վոչչացնում (թաղում):

Բ) Առողջ հորթերն առանձնացվում են նախապես մաքրված և կրով հիմնական կերպով ախտահանված, վարակից զերծ գոմում: Նոր հորթանոց փոխադրելուց առաջ հարկավոր և հորթերի վոտները լվանալ և ախտահանել:

Ց) Հորթերի տակ փոված ցամքարն ամեն որ փոխվում եւ:

Ամենից նպատակահարմար և ամեն մի նորածին հորթի համար ունենալ առանձին վանդակ, վորը պետք ելինի շարժական: Շարժական առանձին վանդակներն ավելի հեշտ են ախտահանվում գեղորայքով, իսկ արևոտ որերին հեշտությամբ փոխադրվում են դուրս արելի տակ ախտահանելու համար:

### Հիվանդ հորթերի բնիկներ

Հիվանդների բուժումը վորոշ պայմաններում կարող ե տալ զբական արդյունք: Ինչպես վերն ասացինք, բուժման ձևերի մանրամասնությունները թողնում ենք անասնաբուժին: Այստեղ կարող ենք հանձնաբարել այնպիսի միջոցներ, վոր փորձված հորթապահը կարող ե ինքը կատարելու կուծող հորթին տրվում ե մեկ ճաշի գեղալ գերչակի յուղ վորպես լուծծողական: Յերբ աղիքները մաքրվում են, քիչ թարմ կաթի հետ խառնում են մի թեյի գդալ կավիճի փոշի և տալիս հորթին: Որպես տրվում է չ թեյի գդալ:

Թարմ մածնի գործածությունը նույնպես տալիս ե բավարար արդյունքներ: Մաքրուր ամանի մեջ թարմ մաքրուր մերանով պատրաստված, յերեսի սերը քաշոծ մածնից 2—3 ապուրի գդալ արվում և հիվանդ հորթին որական 4 անգում: մածունը պետք ե տրվի մաքրուր գդալներով, վորոնք յուրաքանչյուր հորթի կերակրելուց հետո հարկավոր ե յետացրած տաք ջրով լվանալ: Յերեկոյան պատրաստված մածունը պետք ե տալ հաջորդ որը թթու մածնով չի թույլատրվում կերակրել:

### ԿԱՆԱՐՅԻԵԼ ԸՆԴՀԱՆՈՒՐԻ ՄԻՋԱՅԱՀՈՒՄՆԵՐ

Ինչպես վերն ասացինք, առանց կովապահի և հորթապահի գիտակից և ակտիվ մասնակցության,

հնարավոր չեւ պայքար մղել այս հիվանդության գեմ։  
Հորթապահը պետք եւ իմանա, վոր յերբ ինքը հիվանդ  
անասունների գոմից գուրս եւ գալիս, իր ձեռների,  
շորերի և վոտների վրա կրում եւ վարակը, նա առանց  
առողջ հորթերի գոմը մտնելու, կարող եւ վարակն  
այնտեղ մտցնել։ Կողիկների վրա գտնված վարակը  
քայլելու ընթացքում ընկնում եւ գետին, հատակին։

Մի ուրիշ հորթապահ, վորը խնամում եւ առողջ  
հորթերին, անցնում է նույն ճանապարհով և կողիկների  
տակով փոշու հետ վարակը փոխադրում եւ առողջ հորթե-  
րի գոմը և նրանց ևս վարակում նույն հիվանդու-  
թյամբ։ Սրա համար անհրաժեշտ եւ։

Ա) Վոր տավարապահը, հորթապահը, անասնա-  
բույժը և բոլոր նրանք, ովքեր մտնում են հիվանդների  
գոմը, արտագննում և հատուկ կողիկներ հագնեն  
և դուրս գալիս հանեն և թողնեն գոմում։

Բ) Յուրաքանչյուր գոմում պետք եւ ունենալ  
լվացարան, ոճառ և ախտահանիչ լուծույթ, վորպեսզի  
գոմի սպասարկու կազմը յուրաքանչյուր անգամ ձեռնե-  
րը լվանա և ախտահանիչ։

Լավ արդյուներ ետալիս նույնպես ծննդաբերու-  
թյունից 6—8 շաբաթ առաջ հղի կովերի փոխադրումը  
նախապես ախտահանված, վարակից զերծ գոմ։ Այդ  
գոմի աշխատակիցները վոչ մի շփում չպետք եւ ունե-  
նան վարակված գոմերի և այնտեղի հետ կալ ունե-  
ցող մարդկանց, անասունների և առարկաների հետ։

Սատկած հորթերի դիմակները թիթեղապատ արկղ-  
ներով փոխադրում են անասունների գերեզմանոց  
և այնտեղ խոր թաղում։ Արկղն ախտահանվում եւ  
ախտահանիչ լուծույթներով, Սատկած հորթը փոխա-  
դրողները և թաղողները պետք եւ ախտահանեն իրենց  
կողիկները, ձեռները և փոխեն իրենց արտհագուստը։

Սատկած հորթի վանդակը կամ նրա կեցած  
տեղը մաքրվում և խնամքով ախտահանվում եւ։

Եթեն ծնունդը գուգադիպում և գարնան և ամառվա  
յեղանակին, յերբ կովերն արոտում են դտնվում, հար-  
կավոր և ծնունդն ընդունել արոտում բացոթյա,  
արևի տակ, վորտեղ նորածինների համար սպիտակ  
փորուծի մանրեներ չկան նորածին հորթը և մայրը  
թողնվում են արոտում, ի հարկե, յեթե անձրեներ  
չկան, մինչև յերեկո և յերեկոյան հորթին տեղափոխում  
են նախապես մաքրված և ախտահանված չոր գոմ։

Գարնանը, յերբ կովերն արոտ են դուրս գալիս և  
զիշերում են բացոթյա, գոմերը հարկավոր և մաքրել,  
պատերն սպիտակեցնել, ախտահանել, լուսամուտնե-  
րը բաց անել և այնտեղ վոչ մի անասուն չթողնել  
մինչեվ աշուն, յերբ յեղանակները ցըտում են և  
անասունները նորից վերադարձվում են դոմ։ Ամառվա  
չորս ամիսների այս ժամանակաշրջանում գոտում  
գտնված մանրեները չօրանում են և վոչնչանում։  
Ամառվա ծնած հորթերին պետք եւ տեղավորել հատուկ  
հորթանոցներում, վորտեղ աշնան, կամ ձմռան հորթեր  
չպետք եւ լինեն։

Վերոնիշյալ միջոցառումների անշեղ կիրառումով  
միայն հնարավոր կլինի հաջող կերպով պայքար  
մղել հորթերի սպիտակ փորուծի դեմ Սոցիա-  
լիստական անասնապահությունում սովորողներում և  
կոլխոզներում մնձ հնարավորություններ կան վարակիչ  
հիվանդությունների դեմ կազմակերպված պայքար  
մղելու, սաեղծելով ընդհանուր, հիվանդությունները  
կանխող միջոցներ, կառուցելով լուսավոր, մաքուր, չոր  
և տաք գոմեր կովերի և հորթերի համար, մեկուսա-  
րաններ՝ հիվանդների համար, կիրառելով ռացիոնալ  
կերակրում, անասնաբուժական և անասնաբուժական  
մշտական հակողություն։

## ԴԱՄՆԵՐԻ ՍՊԻՏԱԿ ՓՈՐԼՈՒԺԾԻ

Դաւների սպիտակ փորլուժը հորթերի սպիտակ փորլուժի նման շուրջ վարակիչ հիվանդություն և, վորը յերկան և գալիս գառների աճման առաջին որերում և պատճառ և գառնում նրանց մասսայական կոտորման:

Հիվանդությունն առաջ ե գալիս հասարակ աչքով անտեսանելի, բայց մանրագիտակի տակ տեսանելի, փոքր կենդանի եյակների միջոցով, վորոնց վերեւում մենք անվանեցինք միկրոբներ, մանրեներ Այս միկրոբները մեծ քանակությամբ գտնվում են վիրլուծով հիվանդ գառների կղկղանքի մեջ: Այս կղկղանքով կերտությամբ ցամքարի վրա մայր վոչխարները նստելիս՝ կեղաստում են իրենց կուրծքը, նորածին առողջ գառը ծծելով մոր կեղաստված կուրծքը, կաթի հետ միասին կուլ և տալիս սպիտակ փորլուծի միկրոբները և հիվանդանում: Միկրոբները կարսղ են անցնել նույնպես դեռ չչորացած պորտի միջոցով: Գառները կարող են կեղաստված խոտի շուրջ բերանն առնելուց նույնպես ընդունել մեծ քանակությամբ միկրոբներ և հիվանդանում: Սպիտակ փորլուծի առաջ գալուն նպաստում են մի շարք կարենոր պայմաններ. 1) ցուրտ, միջանցիկ քամիների յենթակա, խոնավ և հեղձուցիչ ող ունեցող գոմերը, 2) մայր վոչխարների տնբավարար կերակրումը և վատորսկ կերը—բորբոսնած, անմարսելի թթու խոտը—կամ այնպիսի կերը, վորը փոխում ե կաթի բա-


ղաղ բությունը և ազդում գառան վրա: Հասարակ փորլուծը վատ խնամքի հետեւանքով կարող ե փոխվել սպիտակ փորլուծի և տարածվել առողջ գառների վրա:

Հիվանդության նշանները. հիվանդությունը հայացնավում ե ծնելու տառաջին որից մինչև 4-րդ որը, ամենից շատ՝ առաջին որերը Գառներն իրենց աշխատությունը և ծծելու ցանկությունը կորցնում են, թույլ են և տիպուր: Յերկար ժամանակ պառկած են մնում. այս նշանները յերեվալուց 12 ժամ, կամ ամենաուշը 2 որ հետո առաջնում է ուժեղ փորլուծ: Զրիկ, գարշանոտ, սկզբում դեղնորակ կղկղանքը դառնում ե զորշ սպիտակագույն, փրփրուա, վորը հաճախ պարունակում ե չմարսված կաթի փսորներ և արյան բծեր: Գառը շուտ և արտաթերում, մեջքը կոացրած: Փորը յերբեմն փքված ե լինում և ձեռք տալիս ցավի զգում: Զերմությունն սկզբում լինում ե 40,5°—41,5 աստիճան ծելսիուսի, վորը շուտով իջնում ե: Սիրտն արագ և թույլ և բարախում, ջնջառությունն արագացած ե և մակերեսային Աչքերի, բերնի և քթի լորձաթաղանթը կարմրած ե Շուտով առաջանում է սաստիկ թուլություն, աչքերը փոս են ընկնում, բերնից և քթից լորձյունք ե հոռում, մաշկը սառչում ե և գառը սատկում ե վիզը յերկարած զրությամբ:

Սպիտակ փորլուծից սատկած գառների ներքին դորձարաններում լինում են նույն փոփոխությունները, ինչ վոր նկատված են հորթերի սպիտակ փորլուծի ժամանակ:

Բուժումը.—

Վորովհետեւ հիվանդությունը շատ արագ ընթացք ե ընդունում, դեղորայքի գործողությունն այնքան ելլավ արդյունքներ չի տալիս: Թարմ մածնի դորձածու-



Թյունը տալիս և դրական արդյունք Մաքսւը ամանի մեջ, թարմ, մաքուր մերանող պատրաստված, յերեսի սերը քաշված թարմ մածնից չ թեյի գդալ, որը չ անդամ ծծելուց առաջ արվում է հիվանդ գառներին. մածունը չպետք և սառը լինի:

Կանխարգել առողջապահուկան միջոցառումներ.—

Գառների դիակներն անմիջապես հեռացնել գոմեթից և գոմերից հեռու, առանձնացած տեղում խորը թաղել, Սատկած գառան տեղը մաքրել, ախտահանիլ, Դեռ չճնած վոչխարներին փոխադրել նախապես ախտահանված, չոր, լուսավոր և լավ ոդափոխվող գոմ, վորտեղ վոչ մի ծնունդ չի ընդունվել Ծնող վոչխարների և գառների տակ փոել առատ, չոր և մաքուր ցամքար, թոմը, վորտեղ հայտնաբերված և հիվանդություն, հաճախակի ախտահանման յենթարկել և այնտեղի հովիվներից վոչ վոքին չթույլատրել մուտք գործել այն գոմերը, վորտեղ հիվանդություն չի յեղել, Հովիվները գոմից դուրս գալիս պետք և ձեռները լվանան ոճառով, ախտահանեն և աբտնագուստները թողնեն գոմում Յուրաքանչյուր գոմի դրան առջև անհրաժեշտ և ունենալ ախտահանիչ գեղորայք պարունակող մի տաշտ, վորի մեջ գոմից դուրս յեկողը պետք և ախտահանի իր վոտները:

Ծնվելու յերկրորդ որը, յերր նկատվում և, վոր դառը հիվանդանում ե՞ թեկուղ հասարակ փորլուծով, անմիջապես հարկավոր և նրան մորից հեռացնել և որական յերեք անդամ կերակրեր Ծննդի ժամանակ հարկավոր և վոչխարին տալ լավորակ կեր:

Վերոհիշյալ միջոցառումների անշեղ կիրառումը, ինչպես փորձերը ցույց են տվել, բուրժվին հեռացնում և գառների սպիտակ փորլուծի վտանգը:

Խոզի ձագերի և ձիու քուռակների սպիտակ փորլուծն առաջանում է համարյա նույն պայմաններում, ինչ պայմաններում առաջանում է հորթերի և գառների սպիտակ փորլուծը, դրա համար ել նրա դեմ կիրառվում են պայքարի նույն միջոցները:

### ՄԱՅԼԱՇՆԵՐԻ ՎԱՐԱԿԻՉ ՀՈԴԱՏԱՊՐ ԿԱՄ ԱՐՅԱՆ ԹԱՐԱԽԱՎԱՐԱԿՈՒՄԸ

Այս հիվանդությունը գլխավորապես նկատվում է քուռակների և հորթերի մոտ, հիվանդների պորտի արմատը և հողերն ունչում են և թարախակալում, Այս հիվանդությունը, ինչպես սպիտակ փորլուծը, նույնպես առաջանում է աչքով անտեսանելի մանրեների միջոցով, վորոնք կեղտի և այլ միջոցներով մուտք են գործում նորածնի պորտի մեջ, բազմանում են այնտեղ, հետո անցնում արյան մեջ և այնտեղից ել տարածվում հողերը, Հիվանդ կինդանու բորբոքված պորտից հոսած հեղուկը ցամքարի միջոցով կարող է վարակել առողջ անսուններին: Ծննդաբերության ժամանակ ոժանդակող մարդու անմաքուր ձեռքերի միջոցով վարակը նույնպես կարող է փոխանցվել նորածնին: Հիվանդ անսառունի կղկղանքը նույնպես հանդիսանում է վարակի աղբյուր:

Հիվանդության նշանները գլխավորապես հայտնվում են ծննդից 1—2 որ հետո, հազվագյուտ դեպքերում ավելի ուշ, իսկ բացառիկ դեպքերում անասունը ծնվում է արդեն հիվանդ:

Հիվանդի պորտը մեծ մասամբ ուռած և, զգայուն և տաք: Պորտալարը դանդաղ և զորանում: Պորտանցքից հոսում է թարախային կամ նեխած հեղուկ: Հիվանդի ախորժակը նվազում է, կամ բոլորովին կոր-

չում. նա սաստիկ հյուծվում եւ և թուլանում: Ջերմությունը բարձրանում եւ, սիրառ բարախում եւ արագ, շնչառությունը նույնպես արագանում եւ:

Շուտով առաջանում են ուռուցքներ ծնկային, արմնկային հողերում: Հիվանդը ցավ եւ զգում հողերում և կաղում: Թարախակալած ուռուցքը հաճախ ինքնըստինքյան պատովում եւ և այնտեղից դուրս և հոսում մածուցիկ լորձաթարախային հեղուկ: Հաճախ այդ հեղուկի մեջ նկատվում են վոսկրի և կրծիկի փոքր կտորներ Արյան միջնորդ մանրեները հաճախ անցնում են թռքերը և առաջացնում թռքերի բորբոքում, վորի ժամանակ անասունը հազում եւ, շնչառությունն արագանում և քթից հեղուկ և հոսում:

Բացի սրանից, մեծ մասամբ առաջանում եւ աղիքների թարախային բորբոքում, վորի հետեանքով անասունը փորի ցավ եւ զգում և լուծում եւ: Կղկղանքն սկզբում լինում եւ բաց գույնի, հետո դառնում եւ մռագ, ջրիկ և շատ գարշանոտ:

Հիվանդության շատ սուր տեսակի դեպքում նրա տեսողությունը շատ կարճ եւ լինում: Անասունի ջերմությունը բարձրանում եւ, առաջանում եւ ուժեղ փորլուծ, յերենն նույնիսկ արյունախառն մեղ Հիվանդը սատկում եւ 1—2 սրբա ընթացքում:

Մահացության գեղքերը հորթերի մոտ կազմում եւ 35—40°/օ, քուռակների մոտ՝ 50—60°/օ:

Քուռամբ.—Պորտի թարախակալված բորբոքման ժամանակ ուռուցքը ճեղքում են և ախտահանիչ դեղորայքով ախտահանում: Հողերի ըորբոքման ժամանակ քուռակների հողերն ոճում են սնդիկի դորշ ոճանելիքով կամ անանաբուժի կողմից ճեղքում եւ, թարախը դուրս բերվում և դեղորայքով ախտահանվում:

Առողջապահական կանխարգել միջոցառումներ. —

Առաջին հերթին պետք եւ խիստ ուշադրություն դարձնել և ծննդաբերության ժամանակ մաքրություն պահպանել: Ծննդաբերությունից առաջ մաքրության վերաբերյալ ձեռք պետք եւ առնել բոլոր այն միջոցառումները, վոր ցույց ենք տվիլ հորթերի փորլուծի ժամանակ: Ծնելուց անմիջապես հետո նորածնի պորտն ոճում են յողի լուծույթով կամ փայտի ձյութով՝ առանց պորտին ձեռք տալու: Հորթերի և քուռակների վանդակները պետք եւ պահել խիստ մաքրությ Այնտեղ վորտեղ հիվանդներն են յեղել, հարկավոր եւ մաքրել և խնամքով ախտահանել: առողջ անասուններին հարկավոր եւ անջատել հիվանդներից նորածինների մայրերին հարկավոր եւ տալ համապատասխան լավորակ կեր:

ՆՈՐԱԾԻՆԵՐԻ ԹՈՐԵՐԻ ՎԱՐԱԿԻՉ ԲՈՐԲՈՒԹՈՒՄԸ

Այս հիվանդությունը հայտնվում եւ գլխավորապես նորածին հորթերի, խողերի և գառների մոտ առհասարակ դարնան ժամանակ, բայց կարող եւ շարունակվել և ամբողջ ամառվա ընթացքում, մանավանդ հորթերի մոտ:

Հիվանդությունն առաջանում եւ զանազան ճանապարհներով՝ կենդանու թռքերի մեջ մուտք դորձող մանրեների միջոցով:

Հիվանդանում են մի շարաթականից մինչև 6 ամսական մատղաշները:

Հիվանդությունը հիվանդից առողջին փոխանցվում եւ, յերբ հիվանդը հազում է և հազի միջոցով արտաղրված լորձունքն ընկնում եւ առողջ անասունի բերնի կամ քթի մեջ, վորտեղից վարակն անցնում եւ թռքերը և առաջացնում թռքերի բորբոքում:

Առողջ անասունը կարող է վարակվել և ուզիշ միշտով ինչպես, որինակ, յերբ նա լիզում և կեղտու պատը, ուտում և կեղտու խոտը, կաթ և խմում կեղտու ամանից կամ ծծում և մոր չմաքրված կուրծքը և այլն:

Հիվանդության առաջացման նպաստում են անահունի առողջությունը թուլացնող դանազան պայմաններ, ինչպես, որինակ, ցրտառությունը, մատղաշներին հատկացված գոմի հատակը կամ պատերը ցեմենտած լինելը, միջանցիկ քամիների յինթակա ցուրտ և խոռնավ գոմերը, անասուններին մշտական դոմում պահելը, մարտղական գործարանների խանգարումը (անժամանակ ծծից կտրելը, վոչ ուսցի՛ոնալ կերակրումը, փորլուծը):

Հիվանդության օւանները.—Թոքերի վարակիչ բորբոքումն առաջ է գալիս կամ անկտիս կերպով, կամ մատղաշների ուրիշ վարակիչ հիվանդությունների հետ զուգընթաց (փորլուծ, վարակիչ հողատապ), իսկ խոռնի ձագերի մոտ՝ յերենն առաջ է գալիս վորպես հետեւանք թոքերի մեջ գտնված մեծ քանակությամբ կլոր ճիճունների:

Վարակն անասունի մարմնի մեջ մտնելուց հետո մինչև հիվանդության նշանները յերեալը տևում է՝ հորթերի մոտ 2—18 որ, իսկ խոռերի մոտ՝ 1—3 շաբաթ:

Հիվանդությունն ունենում է յերկու ընթացք՝ սուր և կիսասուր (յերկարատեկ). Սուր տեսակով հիվանդանում են ավելի մատղաշ մի քանի շաբաթ հասակ ունեցող անասունները:

Սուր տեսակի հիվանդության նշանները հետեւյալներն են. հիվանդը շատ թույլ է, ախորժակը կորցնում է, ջերմությունը բարձրանում է մինչև 41° և

բարձր, չնչառությունն արագանում է, ունենում է կարճ, ուժեղ և ցավոտ հագու կրծքի վանդակի վրա ճնշելիս հիվանդը ցավ է զգում: Հետո այս նշաններին միանում են փորլուծ, վիքվածություն, ընդհանուր թուլություն, վորին հիվանդությունից 2—6 որ հետո հետեւում է մահը:

Հիվանդության կիսասուր տեսակն առաջ է բերում թոքերի ավելի ծանր և յերկարատեկ հիվանդություն: Հաղը լինում է ավելի հաճախ, խուլ և ցնցումներով: Ծնչառությունն արագանում է, քթից և աչքերից լորձաթարախային հեղողուկ է հոսում: Վերջի վերջությունին հյուծված՝ հիվանդը սատկում է: Պատահում է, վոր հիվանդության նշաններն աստիճանաբար թեթևանում են և անասունն առողջանում է:

Այս հիվանդությունից սատկած անասունի թոքերը պնդացած են լինում, ինչպես լյարդը. Նըանք կորցնում են իրենց առաձգականությունը, փափկությունը վարդագույնից դառնում են մուգ կարմիր կամ գորշագույն: Կրծքի վանդակի ներքին յերեսի վրա պանրանման սալիտակ փոսեր են նկատվում:

Յերկարատեկ հիվանդությունից սատկած անասունի թոքերում նկատվում են թարախակալված պանրանման ուռուցքների:

Դեղորայքի գործածությունն այս հիվանդության ժամանակ շատ քիչ արգյունք է տալիս: Դիխալոր ուշադրությունը պետք է դարձնել կանխարգել միջոցառութների վրա:

Կանխարգել միջոցառումները լիվ պայքարի ձեվերը.—

Ամենահիմնական կանխարգել սիջոցառումն այս հիվանդության նկատմամբ մատղաշների խնամքի բարելավումն է: Մաքրությունը, ցամքարի հաճախակի

փոխելը, ցրտից, խոնավությունից, միջանցիկ քամիներից պաշտպանելը, սացիոնալ կերակրումը պայմաններ են, վորոնք վճռական դեր են խաղում հիվանդությունը կանխելու գործում:

Ուրիշ տեղից նոր գնված անասունները պետք են մինչև 2 շաբաթ մեկուսացած պահել:

Հիվանդություն հայտնաբերված վայրում հարկավոր է առողջ հորթերին անմիջապես առանձնացնել հիվանդներից և կասկածելիներից, Յերբ հիվանդությունը դեռ շատ չեն տարածված և հիվանդների թիվը քիչ է, հարկավոր է նրանց սպանել՝ վարակը չտարածելու համար:

Ինչ վերաբերում է առողջապահական ուրիշ միջոցառություններին—ախտահանություն, մեկուսացում և այլն, նույնն են, ինչ վոր սովիտակ փորլուծի դեպքում:



ՀՀ Ազգային գրադարան



NL0283140

Чиц 25 ч.

8639

424



Вр. КАЗАРЯН

Заразные болезни молодняка  
и  
мероприятия по борьбе с ними

Сельхозгиз

1934

Эривань